ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ Առողջապահության նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Կառավարության 3 շենք հասցեում, ստորև ներկայացնում է ԱԾԻԳ-ՊՀՀՏ-ՇՀԱՊՁԲ-15/1-2016/1 ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2016թ-ի ապրիլի 8-ին կնքված պայմանագրում 2016թ-ի մայիսի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Պայմանագրի շրջանակներում պատվիրատու է հանդիսանում ՀՀ Առողջապահության նախարարությունը, սակայն պայմանգրի հետ կապված վճարումները իրականացվում են ՀՀ ԱՆ Առողջապահական ԾԻԳ ՊՀ-ի կողմից, ինչը հաշիվների դուրսգրման և վճարման ժամանակ խնդիր է առաջացնում Մատակարարի մոտ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի <<ապրանքի գինը և վճարման պայմանները >> բաժնում ավելացվել է 4.3 կետ, որտեղ ամրագրվում է, որ պայմանագրի շրջանակներում վճարումները իրականացվում են ՀՀ ԱՆ ԱԾԻԳ ՊՀ կողմից, և համապատասխան փոփոխություններ են կատարվել կողմերի վավերապայմաններում:

Փոփոխության հիմնավորում: Փոփոխությունը պայմանավորված է ԱԾԻԳ ՊՀ-ի և Մատակարարի՝ Պայմանագրի շրջանակներում վճարման հետ կապված հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությամբ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Հարությունյանին

Հեռախոս՝ 010 29-75-36

Էլ. փոստ՝ procurement@healthpiu.am

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝ Չկան

Պատվիրատու՝ ***ՀՀ Առողջապահության նախարարություն***